





Ոսկանեանի մօտ վանականի խստամբեր վարքը կարելի էր նշմարել կենցաղային մարզէ ներս ընդհանրապէս: Չափազանց ժուժկալ էր ան, հակառակ որ նիւթական բաւարար միջոցներ չէին պակսեր իրեն: Դուրսը զվարթաց կարելի չէր տեսնել զինք: Կը բաւականանար նուազագոյնով եւ աւելին ունենալու ձգտում չունէր երբեք:

Սրամտութիւններով լեցուն այդ գուարթ մարդը կրնար յանկարծ լռջանալ երբ խօսքը ազգային եւ եկեղեցական նիւթերու շուրջ դառնար: Կը պաշտպանէր ոգի ի բոլին եւ բոլորով արտիւ Հայաստանեայց Եկեղեցին եւ անոր նուիրապետութիւնը: Չէր համոզուած որ մարդիկ քննադատեն կամ ծաղրի առարկայ դարձնեն եկեղեցին եւ եկեղեցականութիւնը: Եղած են առիթներ երբ բացէ ի բաց ճակատած է մտատրական մարդոց հետ, որոնք յանդգնած են իր առջեւ երգիծանքի նիւթ դարձնելու հոգեւորականութիւնը եւ կամ կրօնը:

Ազգային եւ եկեղեցական հարցերու մէջ միշտ ուղղափառ դիրքի վրայ գտնուած էր եւ հոն ալ մնաց մինչեւ իր կեանքին վախճանը: Եղաւ միշտ հաւատարիմ Հայաստանի, Ս. Էջմիածնի եւ Երուսաղէմի Առաքելական Աթոռին: Բայց պարզ հաւատարմութենէ մը անդին՝ անընդհատ իր շուրջիններուն քարոզեց կենսական կարեւորութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ միասնականութեան եւ Երուսաղէմի Պատրիարքութեան: Համոզիչ էին իր խօսքերը՝ համեմուած պատմական օրինակներով եւ սրամիտ դարձուածքներով: Մարդիկ ներառեալ կարգ մը եկեղեցականներ՝ առանց ձանձրանալու մտիկ կ'ընէին զինք եւ ինքնաբերաբար կ'իրացնէին իր ցուցմունքները:

Թեպէտեւ գեղարուեստական ատմով զրական վաստակ չունեցաւ, բայց երկար տարիներ հայերէն եւ անգլերէն լեզուներով խմբագրեց տեղական թերթեր եւ թերթիկներ՝ օգտակար հանդիսանալով հայ հաւատացեալներուն: Իր սերնդակիցներուն մօտ լաւ կը տիրապետէր հայերէն լեզուին: Երուսաղէմէն ելած ատեն կէս դար առաջ՝ հանգուցեալ Կիւրեղ Պատրիարք արտօնած էր որ հետը դուրս հանէ Երից Վարդապետաց երկհատոր Հայկազեան Բաղդիթէն օրինակ մը, որ իր ամենասիրած ընթերցանութեան գիրքը հանդիսացաւ եւ զոր Աստուածաշունչի համաբարբառին հետ իր մեծագոյն հարստութիւնը կը նկատէր: Երուսաղէմեան դպրոցի միւս ներկայացուցիչներուն մօտ՝ Ոսկանեան եւս միշտ հետամուտ եղաւ մեր կրօնական մշակոյթը մատչելի դարձնելու մեր ժողովուրդի զաւակներուն: Այդ սկզբունքով գրուած են իր բոլոր յօդուածները, որոնց մէջ նիւթը ժողովրդականացնելու ձգտումը յստակ է: Կրնար ինք եւս հեղինակ դառնալ՝ հաւաքելով գրածները, բայց այդ մտածումը անգամ չունեցաւ կեանքի ընթացքին, իսկ գրքի հեղինակ դառնալու յաւակնութիւնը՝ երբեք:

Պատանեկութեան եւ երիտասարդութեան լիովին թրծուած էր ծեսի եւ ծիսակատարութեան մէջ, այնքան մը՝ որ եկեղեցական կարգ ու սարքը, շարականն ու մեղեդին իր արեան մէջն էին եւ առանց անոնց չէր կրնար ապրիլ: Ամիսներ առաջ երբ հիւանդանոց կը գտնուէր՝ զրկուած քալելու կարողութենէն եւ կը մտածէր պաշտօնապէս հրաժարական տալու սարկաւազութեան պաշտօնէն, փոքրիկ խայծ մը բաւական եղաւ որ յուսադրուի վերադառնալու Աստուծոյ տան ծառայութեան: Հագիւ քիչ մը ապաքինած՝ չվարանցաւ անհաւոր նեցուկով գալու եւ ներկայ գտնուելու Ս. Աթոռի Լուսարարապետին ի պատիւ տրուած հանդիսութեան եւ անկէ ետք ալ՝ իր մահէն քիչ առաջ տեսակցութիւն մը ունենալու Տ. Թորգոմ Բ. Պատրիարքին հետ՝ Նիւ Եորքի Առաջնորդարանին մէջ: Եթէ անսպասելի մահը վրայ չգար, ան կամընդ ունէր յաղթելու մարմնական տկարութիւնները եւ վերադառնալու Ս. Խորանի ծառայութեան:

Երկար տարիներ Ոսկանեան Նիւ Եորքի Ս. Վարդան Մայր Տաճարի Ժամերգութեանց կատարման կը հսկէր՝ օգտակար հանդիսանալով լուսարարապետներուն: Աւելի առաջ ծառայած էր այլ եկեղեցիներու մէջ որպէս սարկաւազ եւ երբեմն ալ որպէս հոգեւոր մատակարար: Արտօնութիւն ունէր քարոզելու եւ առիթը կ'օգտագործէր հայերէնով եւ անգլերէնով բացատրելու հաւատացեալներուն Աւետարանի ճշմարտութիւնները եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանանքը եւ աւանդութիւնները:

Ոսկանեանը տակաւ պակտող հին սերունդին կը պատկանէր, որ օղակ մը հանդիսացաւ այսօրուան եւ նախապատերազմեան (ակնարկը Ա. Համաշխարհային Պատերազմին է) հայ հոգեւորականութեան միջեւ: Իր պատանեկութեան տեսած էր հին հոգեւորականներ եւ լիովին ըմբռնուած վանքի երբեմնի աւանդական կեանքին խնկարայր մթնոլորտը, որուն յիշատակը յաջողեցաւ կենդանի պահել իր մէջ եւ փոխանցել իրմէ երիտասարդներուն՝ սերմանելով անոնց մէջ սէր եւ գուրգուրանք հանդէպ Երուսաղէմի Առաքելական Ս. Աթոռին:

Յարգանք իր յիշատակին:

Հ. Գ. Վ.